

նշանաւոր մեծամասնութիւնը խաղաղութեան կուսակից է, բայց այնու ամենայնիւ պատերազմի շանսերը նոյնպէս մեծ են:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Գերմանացի երկու ամենայայտնի սօցիալիստները, գերմանական պարլամենտի անդամներ Ֆրիշէ և Ֆրիշէկ այժմ Ամերիկայում են գտնուում, որտեղ նրանք պրօպագանդա են անում իրանց գաղափարի աջողութեան համար:

Ամերիկայում քաղաքից քաղաք շրջելով, այդ երկու պարոնները ժողովներ (միտինգներ) են կազմում, այդ ժողովներում ծառեր են ասում, յայտնելով այն միտքը, թէ գերմանական կառավարչական ձեւը փոխելու համար ոչ թէ նոյն իսկ Գերմանիայում յեղափոխութիւն է հարկաւոր, այլ այդ գաղափարի համար պրօպագանդա է հարկաւոր օտար երկրներում, մանաւանդ Ամերիկայում, որ ամենից շատ է համակրում ազատութեան գաղափարին: Ժողովներում գումարում են երկուսից մինչեւ երեք հազար հոգի: Գերմանիայի սօցիալ-դեմոկրատներին մեծ համակրութեամբ են ընդունում Ամերիկայում:

Վերջին միտինգ վճիռ է կայացրել մասւոր անընդհատ պրօպագանդայի միջոցով օգնել գերմանական սօցիալ-դեմոկրատական կուսակցութեանը վերականգնեցնել ազատութիւնը Գերմանիայում և այդ պրօպագանդայի համար մեծ գումարներ են հանգանակում Ամերիկայում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մարտի 4-ին, Ֆրանսիական սենատի նստում չարուհակում էին վիճարարութիւնները ընդհանուր մաքաւայն տարիքի մասին: Այդ վիճարարութիւնների ժամանակ դաշինք մտաւ Վիկտոր Հիւգօ, որը փոխարին 27-ից չէր յաճախում սենատի նիստերին: Չախակողման և կենտրոնի անդամները սկսեցին սաստիկ ծափահարել նրան: Նաո սենատորներ կանգնեցան, միւսները բանաստեղծի չուրջը հաւաքվեցան նրա ձեռքը սեղմելու համար: Վիկտոր Հիւգօն խօսեց. «Սենատի այս ուշադրութիւնը բոլորովին անուպասելի էր ինձ համար: Չեմ կարող արտայայտել, թէ որ աստիճան գգածված եմ ես: Իմ անարժանի չփոթութիւնը, չնորհալուծելիւն է պայայտելի չփոթութիւնը: չնորհալուծելիւն է (Մաքաւարութիւններ): Ելայտնում եմ սենատին և նրա բոլոր անդամներին իմ չնորհալուծելիւնը:

Թամարի հեռանալուց յետոյ նա դու երկար մնաց իր դարանի մէջ, քարկութեամբ նայում էր Դաւիթի վրա, որը այդ րոպէում անշարժ արձանի նման, սառած, ապշած կանգնել էր, բոլորովին չը կարողանալով իրան հաւատացնել, թէ տեսածը իրողութիւն էր, թէ լսածը Թամարի խօսքերն էին: Նա չտապով վազեց օրորովի ետեւից, որ գոնէ միանգամ ես տեսնեմ նրան, բայց նա ազախմաների խումբի հետ գնացել, հեռացել էր արդէն: Այդ միջոցին թուփերի մէջ թաղված դարձանակը գուրս եկաւ իր գաղաւթաւանից, և զարտուողի ճանապարհներով վազ տալով, հասաւ իր ընկերուհիներին:

Այնուհետեւ պատանին ամեն առաւօտ, զիտ վաղորդեան ցօղը չը բարձրացած, քաղում էր լեռներից Թամարի սիրած ծաղիկները, փունջներ էր կապում, զգում էր աղբիւրների յստակ ջրերի մէջ, որ թարմ ու անթաւաւ մնան Թամարին ընծայելու համար: Բայց ծաղիկները օրերով, շաբաթներով մնում էին աղբիւրների մէջ, գունատւում էին, թաւաւում էին, իսկ Թամարը չէր երևում: Պատանին նորերն էր քաղում, նոր փունջներ էր կապում, բայց Թամարը չէր գալիս ու չէր գալիս նրանց տանելու համար: Ի՞նչ էր պատահել, արդեօք հիւանդ էր նա, —պատանին ոչինչ տեղեկութիւն չունէր: Վերջին տեսութիւնից յետոյ անցան շաբաթներ, անցան ամիսներ նա Թամարին չէր տեսնւ: Նա բոլորովին կորցրեց իր սրտի ուրախութիւնը և օրըստօրէ սկսեց աւելի տխուր, աւելի լուռ ու մունջ լինել: Պատանու տրամաւորութիւնը, նրա անմխիթար

նրա յարգանքի և համակրութեան այս ապացույցի համար, Նստում եմ իմ տեղը խորը զգածված: (Շարունակ ծափահարութիւններ): Նախագահը. —Հանձարը բռնեց իր տեղը: Այնատը ծափահարեց նրան և շարունակում է իր պարագովութիւնները: (Մաքաւարութիւններ):

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԻ, 3-ին մարտի, 3 ժ. 3 րոպէ: «Նովոյէ Վրեմիա» լրագիրը հաղորդում է Նովիկովի պատմութիւնը, որ վերաբոյժած Թագաւորին տանում էր: Թագաւորը զոհ էր զօրահանգեալից և ինչպէս երևում էր լաւ տրամադրութեան մէջ էր: Նովիկովը երկու ընկերներով գնացին Մանէֆից Նեվսկի պրօպագանդի: մօտենալով կազմակերպի կամքին նոքա լսեցին բարձրաձայն պայթիւն: Նովիկովը սկսաւ վազել: Նկատելիներն ջրանցքի եզրափողոցով դէպի այն կողմը, որտեղից լսվեցաւ պայթիւնը: Նա 30 քայլ հեռու էր այնտեղից, ուր երևում էր մարդկանց խումբ, յանկարծ բարձրացաւ ձիւնի թանձր սիւն և լավեցաւ նոր պայթիւն: Նա աւելի արագութեամբ վազեց: 8 նաւաստիներ բռնած ունէին մի մարդու: Ինչ որ բաւեցին, բայց նա չը լսեց: ձիւնը փորած էր և ծածկած ումի կտորներով և վերաորվածներով պատկած էր մեռած երկխոյ, վերաորված թիկնապահը և էլի մի անձն: այստեղ էլ ձիւնի վրա պառկած էր Թագաւորը առանց զըխարի և վերարկուի, ոտները փշրած էին, շորերը պատռած էին: արիւնը հոսում էր ոտներից, ձիւնի վրա արեան բեծեր էին: Նովիկովը լաց եղաւ և մօտեցաւ Թագաւորին ասելով, Տէր Աստուած, ի՞նչ արին Ձեր Մեծութեան: Թագաւորը անշարժ պառկած էր, մօտեցան նաւաստիները և սոցա օգնութեամբ Նովիկովը բարձրացրեց Թագաւորին, գրկելով աջ ձեռքով մէջքը և ձախով կուրծքը, նաւաստիները պահպանում էին ոտքերը, առանց ձեռքերից հրացանը թողնելու: Այսպէս անցան մի քանի քայլ, Թագաւորը երկու անգամ ասաց. ցուրտ է, ցուրտ, և աշխատում էր ձեռքը մօտեցնելու ձախտին, որի վրա արիւն էր: Նովիկովը պահպանելով Թագաւորին մի ձեռքով, միւսով հանեց գրպանից թաշմուրտ, որ փաթաթէ Թագաւորի գլուխը:

հալումաշ լինելը չէր կարելի, որ աննկատելի մնար իր ընկերներից, որոնց բոլորի ուրախութիւնն էր նա, որոնք անդադար հարցնում էին նրա թախծութեան պատճառը, բայց ոչինչ չէին կարողանում գուրս բերել լուռ և ծածկաւոր Դաւիթից:

Միջոյ իրաւասութեան ներքոյ գտնվող հովիւների թիւը, բացի Դաւիթից, վեց հոգի էր: Դաւիթը իր բնաւորութեան քաղցրութեամբ սիրելի էր դարձել ամենին: Ոչխարների հանգստի մօտ, գլխարկին խորոյկի շուրջը բոլորած, պատանին չափ անգամ գուրմազանում էր նրանց իր երգերով: Որպէս սիրենք, գիտէր նա անկ թաւի վրա և խիտ սփռողակ ձայն ունէր: Բայց վերջին օրերում նրա ձայնը բոլորովին լռեց:

—Ի՞նչ է պատահել քեզ հետ, մի: Գիշեր հարցրեց կառնարի Վեփօն, գտնելով նրան ոչխարների կայարանից հեռու, պառկած մի ժայռի մօտ:

—Ոչինչ, պատասխանեց Դաւիթը, իր տեղից չը շարժվելով. —քէֆս մի փոքր լաւ չէ, կարելի է մրցած լինեմ:

Դաւիթը ընկերների մէջ Վեփօն միակն էր, որ բոլորից աւելի մոտիկ էր նրա հետ, և վերջին ժամանակներում յուսովեամբ հետազոտում էր նրա զրուիւնը, թէ և ընկերոջը ոչինչ չէր յայտնում:

—Ես գիտեմ, ասաց նա, խոնարհվելով իր ընկերոջ երեսի վրա, —դու ոչ հիւանդ ես և ոչ մրսած ես, բայց գիտեմ, թէ Բնուէ և քէֆդ վատ:

—Ի՞նչու է վատ, հարցրեց Դաւիթը, գլուխը վեր բարձրացնելով:

Այս ժամանակ մօտեցաւ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչը: «Պաշա, ի՞նչպէս ես քեզ գիտեմ», ասաց նա, գլուխը Թագաւորին մօտեցնելով: Ի՞նչ պատասխանեց Թագաւորը, դժուար էր լսել, միայն նա ինչ որ ասաց. ոչ մի հառաչանք չարձակեցաւ կրծքից: Մեծ Իշխանը հրամայեց նաւաստիներին թողնելու հրացանները և մէկի գգաւը հանելով ծածկեց Թագաւորի գլուխը: Նրան առաջ տարան ժողովուրդը հաւաքվեցաւ ամեն կողմից, շատերը ծուր էին դնում երկրպագելով, հեկեկալով լաց էին լինում: Տանջողին դնելու տեղ չը կար: զընդապես Վիորժիկու ձիւնները պայթիւնից վախեցան, փախան դէպի թատրոնական կամուրջը, կապիտան Ֆրանը վազեց նրանց ետեւից: մօտիկ կանգնած էր հասարակ սահնակ, սորանով դժուար էր տանել վերաւորալին: Նովիկովը դարձաւ դէպի Մեծ Իշխանը խնդրելով, որ թոյլ տայ տանելու Թագաւորին այն տուն, որ գտնվում է խնդի կամրջի միւս կողմում, որպէս զի կարելի լինի վերքը կապել: Երևում էր, որ Թագաւորը իր զարհուրելի տանջանքների ժամանակ էլ ուշքը չէր կորցրած, նա լսելով այս նախադասութիւնը, պարզ ասաց, «տարէք պալատը, այնտեղ թող մեռնեմ» և էլի ինչ որ դժուար էր հասկանալ: այս խօսքերը վերջին ձիւն էին չարաբողոքի: Նա փակեց շրթունքն ու աչքերը և աւելի ոչ մի խօսք չարտասանեց: Մօտեցան Վիորժիկու ձիւնները, Թագաւորին նստացրին սահնակը, երկու կողմից նրան պահպանում էին, նա նստած էր թեկն ընկած, գլուխը կախ գցած: Սկզբում գնում էին քայլով, բայց Թագաւորի ոյժը նուազում էր, հըրամայվեցաւ աւելի շուտ երթալ, սահնակը վազեց, ժողովուրդը երկու կողմ վազում էր բղաւելով, վթղովով և լալով: Թագաւորին ներս տարան պալատը:

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԻ, 4 մարտի: Պաշտօնապէս հաղորդում են. մարտի 6-ին նշանակված էր ի Տէր Հանգուցեայ Թագաւորի մարմնի տեղափոխելը Վախուշի պալատից: Պետրօպօլսկի մայր-եկեղեցին «Голосъ» լրագիրը հաղորդում է կղերականութեան ակնատես պօղպօղաշիկ Բուզակովսկու պատմութիւնը: Չինախոյից վերադառնալու ժամանակ ձայնիւն լսեցի և սկսեցի վազել դէպի պատահած անցքի տեղը: Կամուրջը անցնելուց յետոյ, տեսայ Թագաւորի կանգնած կառքը փայտեայ դռների մօտ:

—Դու ինձանից ծածկում ես, Դաւիթ, ես կարծում էի, դու ամեն բան կատես ինձ, խօսեց Վեփօն փոքր ինչ վերաւորված կերպով:

—Ի՞նչ բան պիտի ասեմ քեզ, դու ինքդ ասում ես, թէ ամեն բան իմանում ես:

—Հա, իմանում եմ...

—Ի՞նչ ես իմանում:

—Դու նրա համար ես տխուր, որ Թամարը էլ ոչխարների մօտ չէ գալիս: —Բայց գիտեմ, թէ ինչու համար չէ գալիս:

—Ես ոչինչ չը գիտեմ, թէ դու մի բան գիտես, ասա:

—Կասեմ, պատասխանեց Վեփօն բարեկամական կարեկցութեամբ և սկսեց պատմել իր հաւաքած տեղեկութիւնները: Նա յիշեցրեց Դաւիթին նրա վերջին անդադող տեսութիւնը Թամարի հետ, յիշեցրեց նրանց սիրային խօսակցութիւնները, աւելացնելով, որ այդ միջոցին աղախմաներից մէկը, թուփերի մէջ թաղված լսում էր նրանց, և նա գնացել, բոլորը իմացում է տուել նրա խորթ մօրը:

Վերջին խօսքերը լսելու ժամանակ Դաւիթը բոլոր մարմնով դողաց, նրան տիրեց մի տեսակ սոսկում, կարծես, ամբողջ քարածայրը, որի տակին պառկած էր նա, փուլ եկաւ: Նրա գլուխը, նրա երկեղը, նրա սարսափը իր մասին չէր: Նա այն տեսակ երկուտ բնաւորութիւններից չէր, որ վախենար իր յարաբերութիւնների մի իշխանազն աղջկայ հետ յայտնվելուց, թող թէ, դա մեծ պարոնի եղբոր աղջիկը լինէր: Շատ-շատ, կը թողնէր այդ երկիրը և կը հեռա-

ջրանցքի վանդակապատի մօտ մարդկերանց մի խումբ էր կազմել, որ բռնել էր չաւաքործին: Վաղեջը, յոգնած ես և Պրեօրոժենսկի օֆիցերներից մէկը խումբից 10 քայլ հեռանալով, մօտ վազեցինք Թագաւորին և ետեւից նրան չը ձանաչելով, հարցրինք. ինչ պատահեց Թագաւորին: Թագաւորը, շարունակելով գնալ, յետ նայեց և խաչակնքվելով ասաց. փառք Աստուծոյ, ես ազատվեցայ: Բայց ահա. կառքի մօտ ընկած էր վերաւորված կողակ, մի փոքր հեռու բղաւում էր վերաւորված փոքր տղայ: Լսելով Թագաւորի խօսքերը, չարագործը նկատեց. արդեօք վաղ չէ՞ փառք Աստուծոյ ասել: Այդ օվ է, հարցրեց Թագաւորը: Մէկը պատասխանեց. մեշտինն Վրեմիայից նրա ձեռքից խաւք լեզուներից ծուխ էր դուրս գալիս: Մէկ էլ կայ, ասաց նա: Նրա գրպանները փնտռելով մի գաշայն գտան: Ժողովուրդը աղաղակում էր՝ վանդակապատից էին կրակ արձակում: Ես հրամայեցի կտրել դռները, խուզարկել այգին և յետ դարձայ Թագաւորի մօտ: Ես նրանից 10 քայլ հեռու էի, երբ սարսափելի ձայնիւն լսվեցաւ: Մեծ քանակութեամբ ծուխը և ձիւնը մի քանի վայրկեան ծածկեցին ամեն բան: Թագաւորը վաղը ընկաւ: Ինձ հետ միաժամանակ մօտ վազեց Նովիկով և ծուխային զինուորները: Մեծ քարձրացրինք Թագաւորին: Երեկեցաւ, որ ոտքերը բոլորովին մերկ էին, միտը կտորներով կախված էր, մի ոտքի պատուանդանը բոլորովին կտրված էր: Այդ ժամանակ մօտ վազեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչը: Գուրս է, ցուրտ է, արտասանեց Թագաւորը թոյլ ձայնով: Քննութիւնը կատարվում է 1878 թուականի մայիսի 19-ի օրէնքի համեմատ պրօկուրօր Պլեկէի և 4 օգնականների ձեռքով: Չինուորական դատարանի նիստը չարագործի մասին յետաձգված է: Ստոյգ է որ Թագաւորի սպանութիւնը կատարվեցաւ ձայնովոյ գնդակների օգնութեամբ:

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԻ, 4 մարտի: Այսօր ժամը 2-ին, Մալայա Սաբօփայա փողոցում, Մէնդգէլի տան պանրավաճառի խանութի ներքնայարկում գտնված է մի ական (ղամ), որ դուրս էր գալիս Մալայա Սաբօփայա փողոցի տակով: Խանութի տէրը վարձեց այդ բնակարանը դեկտեմբեր ամսին, իսկ տեղափոխվեց յունվարին: Երէկ երեկոյան այդ մարդը իր կնոջ հետ անյայտացաւ, խանութի գոնները բաց թողնելով: այդ դարձեց ոստիկանութեան ուշադրութիւնը: Գտան մի ական խանութի բնակարանի մասից: Գիվանի տակ գտնված են շաղափ, խնային քարեր և հօդ: Ականահատ գիւնուորների մի խումբին հրամայված է հետազօտել ականը:

Խմբագիր.—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

նաւոր իր հետ տանելով Թաթարի թէ սէրը և թէ տրամաւորութիւնը: Բայց նա վախենում էր նոյն իսկ Թամարի մասին, որ իր պատճառով պիտի տանջվէր, պիտի հաւածվէր, անարգ նախատիքներ պիտի կրէր:

—Դրանցից ոչ մէկը չի լինի, միտիւրեց նրան բարեխիտ Վեփօն, —դրանք կարող էին պատահել, եթէ Թամարի մայրը խորթ մայր չը լինէր: Բայց նա բաւականացաւ միայն նրանով, որ արգելեց Թամարին տնից դուրս գալ:

—Նա կարող է յայտնել մեծ պարոնին, ասաց Դաւիթը վրդովված ձայնով:

—Նա ոչ ոքին չի յայտնի, և խտուրթեամբ պատուիրել է այն աղախման, որ լուռ մնայ:

—Դու ձրտեղից գիտես:

—Ես գիտեմ... այն աղախման իմ բարեկամս է... Նա ասաց, թէ տիկինը այն աստիճան ատում է Թամարին, որ գուցէ շատ ուրախ կը լինի, եթէ նա խայտառակվելու համար կը պսակվի մի հովուի հետ:

—Եւ ինչու է արգելում նրան այստեղ գալ, հարցրեց Դաւիթը, փոքր ինչ հանգստանալով:

—Ո՞վ է իմանում, ինչ սատանայական մտքեր ունի, պատասխանեց Վեփօն ծիծաղելով:

—Ես նրա սատանայական մտքերը կը ոչնչանեմ... խօսեց պատանին խորհրդաւոր ձայնով: —Ես երբէք չեմ թողնի, որ Թամարը խայտառակ լինի...

(Կը շարունակուի)